

**Տ. ԹԱԴԵՈՍ ՔԱՀԱՆԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ**
(ավազանի անունը՝ Հարություն)

Ծնվել է 1976 թ. մայիսի 19-ին, Էջմիածին քաղաքում:

1982-1992 թթ. սովորել է տեղի № 2 միջնակարգ դպրոցում:

1992-1995 թթ. ուսանել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1995-2001 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հուլիսի 1-ին նշանակվել է Մայր Տաճարում՝ իբրև դպրապետի պաշտոնակատար, ապա Կաթողիկոսարանում՝ որպես գործավար-քարտուղար:

2002 թ. հուլիսի 10-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Տ. Նորայր արքեպս. Պողարյանի կյանքն ու գիտական վաստակը» թեմայով:

Նույն թվականին ծառայության է անցել ՀՀ Զինված Ուժերում՝ որպես հոգևոր սպասավոր:

2004 թ. մայիսի 2-ին, ձեռամբ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: